ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 օգոստոսի 2025 թվականի N 53-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈԳՀՈՎԻՏ ԵՎ ՑՈՂԱՄԱՐԳ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ <<ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԹԻՎ ՇԱԹ-29/601 ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԵՂԱՄԱՍԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՄԱՆ ԵՎ ՋԱՐԴԻՉ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՂ ԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԶԻՆՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 28-րդ կետով, հիմք ընդունելով 2025 թվականի հուլիսի 23-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Գոգհովիտ և Ցողամարգ բնակավայրերում անցկացված «ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Գոգհովիտի բազալտների հանքավայրի 2019 թվականի մայիսի 14-ի թիվ ՇԱԹ-29/601 թույլտվությամբ տրամադրված տեղամասի շահագործման աշխատանքների ընդլայնման և ջարդիչ տեսակավորող կայանի վերազինման վերաբերյալ հանրային քննարկումը, մասնակիցների դրական կարծիքները, սոցիալ տնտեսական բաղադրիչի առկայությունը և նոր ներդրումների ներկայացված հիմնավորումները. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Գոգհովիտ և Ցողամարգ բնակավայրերում <<Արծաթե Սյուն>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը թիվ ՇԱԹ-29/601 ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասի շահագործման աշխատանքների ընդլայման և ջարդիչ տեսակավորող կայանի վերազինմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (8)	**Դեմ՝ (1)**	**Ձեռնպահ՝ (0)**
ԴԱՆԻԵԼՅԱՆ	ՄԵԼՔՈՆՅԱՆ	
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ		

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա.

ՄԱՆՈՒԿՅԱՆ Կ.

ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՇԱԲՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«01» օգոստոսի 2025 թվական
գյուղ Աշոցք